



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕԸՏԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱ

ԿԱՆԱԹԵՂ

ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԵՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 28 Յուլիս 2019

121

DIMANCHE, 28 Juillet 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
(ՎԱՐԴԱՎԱՌ)
TRANSFIGURATION
DE NOTRE SEIGNEUR JÉSUS CHRIST
(VARTAVAR)

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.1-7)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(16.13-17.13)

Les lectures de la Bible d'aujourd'hui :
1 JEAN 1.1-7
MATTHIEU 16.13-17.13

Պատարագիչ եւ քարոզիչ՝ / Celebrant
ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Առաջնորդ Գանատահայոց Թեմի
Célébrant:
SA GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN
Primate

Ս. Պատարագ ժամը 12:30-ին
(ՌԻԿՕ)
La Sainte Messe à 12:30
(RIGAUD)

DIACRES - ACOLYTES
Chef de chœur: M. Murat Demirdogen
Organist: M. Harry Farmer

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-7)

Կենաց բանին վրայով, որ սկիզբէն էր, որուն համար լսեցինք, որ մեր աչքերովը տեսանք, որուն նայեցանք ու մեր ձեռքերը շօշափեցին. (Եւ կեանքը յայտնուեցաւ ու տեսանք եւ կը վկայենք ու ձեզի կը պատմենք այն յաւիտենական կեանքը, որ Հօրը քով էր ու մեզի յայտնուեցաւ.) Այն որ տեսանք ու լսեցինք՝ ձեզի կը պատմենք, որպէս զի դուք ալ մեզի հաղորդակից ըլլաք: Մեր հաղորդակցութիւնը Հօրը հետ է ու իր Որդիին Յիսուս Քրիստոսին հետ: Այս բաները կը գրենք ձեզի, որպէս զի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:

Ասիկա է այն պատգամը որ իրմէ լսեցինք ու ձեզի կ'իմացնենք, թէ՛ Աստուած լոյս է ու անոր մէջ բնաւ խաւար չկայ: Եթէ ըսենք թէ Անոր հետ հաղորդակից ենք ու խաւարի մէջ պտրտինք, սուտ կը խօսինք եւ ճշմարտութիւնը չենք ըսեր: Հապա եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս անիկա լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդակից կ'ըլլանք ու անոր Որդիին Յիսուս Քրիստոսին արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (16.13-17.13)

Յիսուս Փիլիպպոսի Կեսարիայի կողմերը երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու ըսաւ. «Մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ ես Որդին մարդոյ»: Անոնք ըսին. «Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս Մկրտիչն էս, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»: Ըսաւ անոնց. «Հապա դո՞ւք ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Միմոն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ. «Դուն ես Քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին»: Յիսուս ըսաւ անոր. «Երանի՛ քեզի, Միմոն, Յովնանի որդի. վասն զի մարմինը եւ արիւնը քեզի չյայտնեցին ասիկա, հապա իմ Հայրս որ երկինք է: Ես քեզի կ'ըսեմ թէ դուն Պետրոս ես ու այս վեմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս եւ դժոխքին դռները անոր պիտի չյաղթեն: Երկնքի թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ եւ ինչ որ երկրի վրայ կապես, երկնքի մէջ կապուած պիտի ըլլայ ու ինչ

որ երկրի վրայ արձակես, երկնքի մէջ արձակուած պիտի ըլլայ»: Ապա աշակերտներուն պատուիրեց, որ մարդո՛ւ չըսեն թէ ինք Քրիստոսն է:

Անկէ յետոյ Յիսուս իր աշակերտներուն ցուցուց թէ՛ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն եւ քահանայապետներէն ու դպիրներէն եւ սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Պետրոս մէկդի առաւ զանիկա եւ սկսաւ յանդիմանել զանիկա ու ըսել. «Քաւ լիցի, Տէ՛ր, այդ բանը քեզի չըլլայ»: Ինք դառնալով՝ Պետրոսին ըսաւ. «Ետի՛ս զնա, Մա՛տանայ, ինձի գայթակղութիւն ես դուն. վասն զի Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները»:

Այն ատեն Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ: Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա եւ ով որ ինձի համար իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա, Քանզի ի՞նչ կը շահի մարդ էթէ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ: Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ եւ այն ատեն ամէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան համը պիտի չառնեն, մինչեւ տեսնեն Որդին մարդոյ իր թագաւորութիւնովը եկած»:

Վեց օր յետոյ Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը եւ անոր եղբայրը Յովհաննէսը ու զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին: Անոնց առջեւ այլակերպեցաւ ու իր երեսը փայլեցաւ արեգակի պէս ու իր հանդերձները ճերմկցան լոյսի պէս: Եւ անա երեւցան անոնց Մովսէսն ու Եղիան ու իրեն հետ կը խօսակցէին: Խօսեցաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, աղէկ է որ հոս կ'ենանք. էթէ կ'ուզես, երեք խրճիթ շինենք հոս, մէկը՝ քեզի, մէկը՝ Մովսէսին ու մէկը՝ Եղիային»: Երբ անիկա կը խօսէր, լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ եւ ամպէն ձայն մը եկաւ՝ ըսելով. «Ատիկա է սիրելի Որդիս, որուն հաւներ եմ, ատոր մտիկ ըրէք»: Աշակերտները երբ լսեցին, երեսնուն վրայ ինկան ու խիստ վախցան: Յիսուս մօտենալով դպաւ անոնց ու ըսաւ. «Ելէ՛ք, մի՛ վախնաք»: Աչքերնին վերցուցին ու մէկը չտեսան, բայց միայն Յիսուսը:

Երբ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ու ըսաւ. «Այդ տեսիլքը մարդու մի՛ պատմէք, մինչեւ Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ»: Աշակերտները իրեն հարցուցին. «Ինչո՞ւ համար դպիրները կ'ըսեն թէ՛ 'Պէտք է որ առաջ Եղիան գայ'»: Պատասխան

տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց. «Յիրաւի առաջ Եղիան կու գայ եւ ամէն բան կարգի կը դնէ: Բայց ձեզի կ'ըսեմ թէ Եղիան արդէն եկած է եւ զանիկա չճանչցան, հապա ինչ որ ուզեցին ըրին անոր. նոյնպէս ալ Որդին մարդոյ անոնցմէ պիտի չարչարուի»: Այն ատեն հասկցան աշակերտները թէ Յովհաննէս Մկրտչին համար ըսաւ անոնց:

1 JEAN 1.1-7

Ce qui était dès le commencement, ce que nous avons ouï, ce que nous avons vu de nos propres yeux, ce que nous avons contemplé, et que nos propres mains ont touché de la Parole de vie, (Car la vie a été manifestée, et nous l'avons vue, et aussi nous le témoignons, et nous vous annonçons la vie éternelle, qui était avec le Père, et qui nous a été manifestée.) Cela, [dis-je], que nous avons vu et ouï, nous vous l'annonçons; afin que vous ayez communion avec nous, et que notre communion [soit] avec le Père et avec son fils Jésus-Christ. Et nous vous écrivons ces choses, afin que votre joie soit parfaite.

Or c'est ici la déclaration que nous avons entendue de lui, et que nous vous annonçons, [savoir], que Dieu est lumière, et qu'il n'y a en lui nulles ténèbres. Si nous disons que nous avons communion avec lui, et que nous marchions dans les ténèbres, nous mentons, et nous n'agissons pas selon la vérité. Mais si nous marchons dans la lumière, comme Dieu est en la lumière, nous avons communion l'un avec l'autre, et le sang de son Fils Jésus-Christ nous purifie de tout péché.

MATTHIEU 16.13-17.13

Et Jésus venant aux quartiers de Césarée de Philippe, interrogea ses Disciples, en disant : qui disent les hommes que je suis, [moi] le Fils de l'homme? Et ils lui répondirent : les uns disent que tu es Jean Baptiste; les autres, Elie; et les autres, Jérémie, ou l'un des Prophètes. Il leur dit : et vous, qui dites-vous que je suis? Simon Pierre répondit, et dit : Tu es le Christ, le Fils du Dieu vivant. Et Jésus répondit, et dit : tu es bienheureux, Simon, fils de Jonas : car la chair et le sang ne te l'a pas révélé, mais mon Père qui est aux cieux. Et je te dis aussi, que tu es Pierre, et sur cette pierre j'édifierai mon Église; et les portes de l'enfer ne prévaudront point contre elle. Et je te donnerai les clefs du Royaume des cieux; et tout ce que tu auras lié sur la terre, sera lié dans les cieux;

et tout ce que tu auras délié sur la terre, sera délié dans les cieux. Alors il commanda expressément à ses Disciples de ne dire à personne qu'il fût Jésus le Christ.

Dès lors Jésus commença à déclarer à ses Disciples, qu'il fallait qu'il allât à Jérusalem, et qu'il y souffrît beaucoup de la part des Anciens, et des principaux Sacrificateurs, et des Scribes; et qu'il y fût mis à mort, et qu'il ressuscitât le troisième jour. Mais Pierre l'ayant tiré à part se mit à le reprendre, en lui disant : Seigneur, aie pitié de toi; cela ne t'arrivera point. Mais lui s'étant retourné, dit à Pierre : retire-toi de moi, Satan, tu m'es en scandale; car tu ne comprends pas les choses qui sont de Dieu, mais celles qui sont des hommes.

Alors Jésus dit à ses Disciples : si quelqu'un veut venir après moi, qu'il renonce à soi-même, et qu'il charge sa croix; et me suive. Car quiconque voudra sauver son âme, la perdra; mais quiconque perdra son âme pour l'amour de moi, la trouvera. Mais que profiterait-il à un homme de gagner tout le monde, s'il fait la perte de son âme? ou que donnera l'homme en échange de son âme? Car le Fils de l'homme doit venir environné de la gloire de son Père avec ses Anges, et alors il rendra à chacun selon ses œuvres.

En vérité je vous dis, qu'il y a quelques-uns de ceux qui sont ici présents, qui ne mourront point, jusqu'à ce qu'ils aient vu le Fils de l'homme venir en son règne.

Et six jours après, Jésus prit Pierre, et Jacques, et Jean son frère, et les mena à l'écart sur une haute montagne. Et il fut transfiguré en leur présence et son visage resplendit comme le soleil; et ses vêtements devinrent blancs comme la lumière. Et voici, ils virent Moïse et Elie, qui s'entretenaient avec lui. Alors Pierre prenant la parole, dit à Jésus : Seigneur, il est bon que nous soyons ici; faisons-y, si tu le veux, trois tentes, une pour toi, une pour Moïse, et une pour Elie. Et comme il parlait encore, voici une nuée resplendissante qui les couvrit de son ombre; puis voilà une voix qui vint de la nuée, disant : celui-ci est mon Fils bien-aimé, en qui j'ai pris mon bon plaisir; écoutez-le. Ce que les Disciples ayant ouï, ils tombèrent le visage contre terre, et eurent une très grande peur. Mais Jésus s'approchant les toucha, en leur disant : levez-vous, et n'ayez point de peur. Et eux levant leurs yeux, ne virent personne, que Jésus tout seul.

Et comme ils descendaient de la montagne, Jésus leur commanda, en disant : ne dites à personne la vision, jusqu'à ce que le Fils de l'homme soit ressuscité des morts. Et ses Disciples l'interrogèrent, en disant : pourquoi donc les Scribes disent-ils qu'il faut qu'Elie vienne premièrement? Et Jésus répondant dit : il est vrai qu'Elie viendra premièrement, et qu'il rétablira toutes choses. Mais je vous dis qu'Elie est déjà venu, et ils ne l'ont point connu; mais ils lui ont fait tout ce qu'ils ont voulu; ainsi le Fils de l'homme doit souffrir aussi de leur part. Alors les Disciples comprirent que c'était de Jean Baptiste qu'il leur avait parlé.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 28 Յուլիս 2019

ՎԱՐԴԱՎԱՐ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ «ՌԻԿՕ»

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք թէ այս Կիրակի, 28 Յուլիս 2019-ին, Վարդավարի տօնին առիթով բացառաբար մեր Կիրակնօրեայ Ս. Պատարագը պիտի մատուցուի «Ռիկօ» մատրան ուխտավայրին մէջ, սակայն մեր Եկեղեցոյ դռները բաց պիտի ըլլան, այն հաւատացեալներուն համար, որոնք կը փափաքին աղօթելու համար այցելել Եկեղեցի առաւօտեան ժամը 10:30-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 1:00: Շնորհակալութիւն Եկեղեցոյ գրասենեակ

ATTENTION:

Sunday, July 28, 2019 VARTAVAR

PILGRIMAGE TO RIGAUD

To our beloved faithful, this Sunday, July 28, 2019, on the occasion of the Feast of Vartavar, the Divine Liturgy will be celebrated at Rigaud temple, but our Church will be open to our faithful who wish to come and pray from 10:30am to 1:00pm

Thank you
Church Office:



Հոգևոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ Ամեն:

«Ան , որ կ'ուզէ հպարտանալ, թող Տիրոջմով հպարտանայ, որովհետեւ փառաւոր է մեր Տէրը, սքանչելի եւ Անոր գործերը »

Սիրելի հաւատացեալներ, մեր Տէրը Յիսուս Քրիստոս Աստուած է Աստուծմէ, Լոյս է Լուսէ, ճշմարիտ Աստուած է ճշմարիտ Աստուծմէ: Հետեւաբար կրնանք հպարտանալ, որ այսպիսի Տիրոջ կը պաշտենք, այսպիսի Տիրոջ կը հետեւինք եւ մեր յոյսը դրեր ենք այս փառաւոր Տիրոջ վրայ:

Այսօր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ մեծ տաղաւար տօներէն մէկն է: Հինգ տաղաւար տօներէն Պայծառակերպութիւնը կը տօնենք այսօր, մեր Տիրոջ այլակերպութիւնը, պայծառակերպութիւնը Թաբոր լեռան վրայ: Որովհետեւ այս տօնը կը յայտնէ մեզի, թէ մենք որուն կը հետեւինք եւ մեր յոյսը որուն վրայ դրեր ենք:

Իր խաչելութենէն մի քանի շաբաթներ առաջ Տէր Յիսուս դարձաւ Իր աշակերտներուն եւ հարցում մը ուղղեց անոնց: Հարցում մը, որ պատասխանը Ինքը լաւ գիտէր, բայց նորէն ալ ուզեց աշակերտները պատասխանեն: Ըսաւ. «Ես երէք տարի կը քարոզեմ եւ կը հրաշագործեմ այս ժողովուրդին մէջ: Ի՞նչ կ'ըսեն Իմ մասիս: Ես ո՞վ եմ»: Աշակերտները իրարու նայեցան եւ ժողովուրդի կարծիքն ըսին Յիսուսին, բայց պահելով վատ կարծիքները, յայտնելով միայն լաւերը: Ըսին, որ ոմանք կ'ըսեն, որ Դուն նոր մարգարէ մըն ես, ոմանք կ'ըսեն, որ Դուն Եղիան ես, որ պիտի գար, կամ Յովհաննէս Մկրտիչը, Յովհաննէսը թէեւ գլխատուեցաւ, սակայն յարութիւն առած է, եւ այդ Դուն ես: Ժողովուրդը ուրիշ բաներ ալ

կ'ըսէր Յիսուսի մասին. կախարդ կ'ըսէին, որովհետեւ հրաշքները ուրիշ ձեւով չէին կրնար բացատրել, իսկնք կ'ըսէին, որովհետեւ Իր ամբողջ գործը ձգած էր եւ Աստուծոյ արքայութիւնը կը քարոզէր առանց դրամի, հերետիկոս կ'ըսէին, որովհետեւ տարբեր տեսանկիւնէն կը նայէր մովսիսական կրօնքին, ներքինի կը կոչէին զայն նաեւ, քանի որ չէր ամուսնացած եւ ամուսնանալու ալ միտք չունէր: Հարկաւ Յիսուս տեղեակ էր նաեւ այս կարծիքներէն:

Բայց Յիսուսին համար կարեւորը ուրիշներու կարծիքը չէր, այլ իր աշակերտներուն, որոնց կը հարցնէ մեղմօրէն. «Իսկ դուք ի՞նչ կ'ըսէք: Ես ո՞վ եմ»: Առանց մտածելու Պետրոս առաքեալը կը պատասխանէ այս անակնկալ հարցումին. «Դուն ես Մեսիան, Դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»: Եւ Յիսուս ըսաւ. «Երանի քեզի, Պետրոս, որովհետեւ այս ճշմարտութիւնը քեզի յայտնողը միսն ու արիւնը չէ, այլ Աստուծոյ Հոգին է, Սուրբ Հոգին է, որ յայտնեց»:

Իրապէս, Տէր Յիսուսի համար, սիրելի հաւատացեալներ, կարեւոր չէ, թէ աշխարհը ի՞նչ կ'ըսէ Իրեն համար: Ո՞վ է Յիսուսը: Դուն, որ քրիստոնէայ ես, դուն, որ կը հետեւիս Քրիստոսին, քեզի համար կարեւոր է պատասխանել թէ ո՞վ է Քրիստոսը:

Ո՞վ է Քրիստոսը: Քրիստոսը հրաշք մարդ մըն է: Մտորին մէջ ծնաւ, իսաչի վրայ մեռաւ: Բանուոր դասակարգին կը պատկանէր, համալսարան չգնաց, բանակներ չունէր, զինուորներ չունէր, դրամ չունէր, պետութիւն չունէր Իր ետեւը կանգնած, բայց աշխարհին ամենէն յաջող մարդը դարձաւ, աշխարհի ամենէն անուանի մարդը դարձաւ, միլիոնաւոր մարդիկ կը հետեւին Իրեն: Ինչպէ՞ս այս ձախողանքէն այս յաջողութիւնը դուրս կու գայ. Որովհետեւ հրաշք մը կայ Իր կեանքին մէջ: Որովհետեւ պարզ մարդ մը չէ ան: Պարզ մարդ մը ըլլայ, Իր տարեդարձը մէկ օր կը տօնենք, այնպէս չէ՞, այնպէս ինչպէս բոլոր մեր միւս հերոսներուն: Բայց երբ որ Իր տարեդարձը գայ, երկու ամիս կը տօնենք՝ մեծագոյն շուքերով, որովհետեւ այս անձին մէջը ուրիշ բան մը կար, Աստուած կար Անոր մէջը: Մեզի կը նմանէր, ճիշդ եւ ճիշդ նոյն էր մեզի պէս, բայց նաեւ մեզմէ շատ տարբեր բան մը կար մէջը. Աստուած կար, հետեւաբար արժանի է, որ Իր ետեւէն երթանք եւ մեր յոյսը կ'ապենք Անոր, որովհետեւ Աստուած է Աստուծմէ, Լոյս է Լոյսէն:

Սակայն Տէր Յիսուս չուզէր, որ մենք կուրաբար հաւատանք Իրեն: Հետեւաբար Իր աշակերտները կ'առնէ շաբաթ մը յետոյ, վեց

օր անցնելէ յետոյ այս գրոյցէն, լեռ կը բարձրանայ երեք աշակերտներով՝ Պետրոսով, Յակոբոսով եւ Յովհաննէսով միասին եւ հոն կ'աղօթեն: Երբ Յիսուս իրենցմէ քիչ մը հեռու ոտքի կանգնած կ'աղօթէ թեւատարած, բան մը փոխուելու կը սկսի իր մարմնին վրայ: Ճառագայթներ արձակելու կը սկսին: Հագուստները կը փոխուին՝ ճեփ-ճեփմակ կ'ըլլան, մազերը եւ մօրուքը կը սպիտականան եւ աշակերտները կը զարմանան այդ տեսողութենէն: Իրենց ոտքերու վրայ ուժ չմնար, ծունկը դրած Պետրոսը կ'ըսէ. «Տէր,- կ'ըսէ,- Քեզի համար, Եղիայի համար եւ Մովսէսի համար երեք տաղաւարներ շինենք»: Որովհետեւ Յիսուսը առանձին չէր. երկու լուսաւոր էակներ կը մասնակցէին այս գրոյցին: Հին Կտակարանի ամենէն մեծ անձերէն էին ասոնք՝ Եղիա եւ Մովսէս մարգարէները: Եւ ճիշդ այդ պահուն լուսաւոր ամպ մը կու գայ, կը ծածկէ Յիսուսը եւ միւսները եւ ձայն մը կ'ըսէ. «Այս է Իմ սիրելի Ռոդիս, որուն մտիկ ըրէք»: Եւ երբ որ ամպը կ'երթայ, միայն Յիսուսը կը տեսնեն:

Այս աշակերտներուն տրուած նուէր մըն էր: Երբ որ կը հաւատային, որ Տէր Յիսուս Աստուծոյ Ռոդին է, որպէսզի իրենց աչքերով վկայ դառնան եւ ճշմարիտ վկայութիւն ընեն ամբողջ աշխարհին, ըսելով թէ՛ «Այս Նագովրեցի Յիսուսին մէջ Աստուածութիւն թաքնուած է, եւ մենք տեսանք այդ մեր աչքերով»:

Սուրբ Երրորդութեան գաղափարը գիտեմ, որ քիչ մը շփոթեցուցիչ գաղափար մըն է, դիւրին հասկնալի չէ: Յիսուս Աստուած է, Հայր Աստուածն ալ երկինք կը գտնուի, ուրեմն Աստուծոյ թիւր երկու՞ կ'ըլլայ: Այս բոլորը իրապէս խորունկ աստուածաբանական խնդիրներ են: Չէ՛, Աստուած երկուքի չի՛ բաժնուիր, Աստուած անբաժանելի է: Բայց եթէ օրինակ մը տանք պարզ, գոր օրինակ պարապ շիշ մը մտածեցէք եւ անիկա ծով նետեցէք, ծովի ջուրով կը լեցուի եւ յատակը կ'իջնայ: Եթէ ակնոցներով նայիք անոր, ծովի ակնոցներով, պիտի տեսնէք շիշ մը: Բայց այլեւս անոր մէջ ի՞նչ կայ՝ ծովի ջուրէն, առանց ծովէն բաժնուելու, այսինքն ծովը երկուքի չբաժնուեցաւ, ծովին ջուրը եւ շիշին մէջի ջուրը նոյն ջուրն է, թէ՛ ծովին մէջն է եւ թէ՛ շիշին մէջ: Երբ որ մարդիկ Տէր Յիսուսին կը նայէին, ինձի պէս մօրուսաւոր մէկը կը տեսնէին: Կը խօսէր, մարդու կերպարանք ունէր, եւ այդպէս էր: Բայց ամբողջ տիեզերքը լեցնող Աստուած կար Անոր մէջը. առանց բաժնուելու նոյն Աստուածն էր: Եւ բնականաբար մարդիկ անիկա չէին տեսներ: Բայց այդ աստուածութիւնը յայտնուեցաւ Թաբոր լեռան վրայ:

Միրելին՝ ր, Տէր Յիսուս Քրիստոս ինչ որ ըսաւ Իր խօսքերուն, ետեւը կ'եցաւ, ինչ որ ըսաւ՝ յաջողեցաւ: Տէր Յիսուս Քրիստոս հրաշքներ միայն չգործեց անցեալին, երբ որ կ'ապրէր. հրաշքներ կը գործէ նաեւ այսօր: Որովհետեւ Աստուած է Ինքը եւ ամէն տեղ է Ինքը: Եւ Ինքը կարող է մեր սիրտերէն ներս մտնել եւ փոխել մեզի: Յիսուս պայծառակերպեցաւ, այլակերպեցաւ. բայց ասիկա ինծի ի՞նչ այսօր: Մեզի համար ի՞նչ բարի լուր ունի այս դէպքը: Ի՞նչ կը տօնենք մենք այսօր: Որովհետեւ մենք կը տօնենք, սիրելիներ, այդ փառաւոր տեսարանը, որ Յիսուսի վրայ կատարուեցաւ, մեր վրայ ալ պիտի կատարուի: Մենք ալ պիտի պայծառակերպուինք, մենք ալ պիտի այլակերպուինք, մենք ալ Քրիստոսի պէս պիտի ըլլանք: Եւ Քրիստոս պիտի կատարէ այդ բանը. մեր մէջը Իր Հոգին ուղարկելով եւ մեր էութիւնը եւ բնութիւնը փոխելով: Աստուածացնելով նոյն գործը պիտի կատարէ: Այն ձայնը, որ Տէր Յիսուսին եկաւ, մեզի եկաւ. «Այս է Իմ սիրելի Որդիս, Որուն մտիկ ըրէք»:

Հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ, շատ մարդեր կը ճանչնաք, բայց եթէ Տէր Յիսուսը չէք ճանչնաք, ձեր կեանքի ամենէն մեծ կորուստն է: Շատ գիրքեր կարդացեր էք, պիտի կարդաք, բայց եթէ Իր խօսքերը չէք կարդացած, շատ պիտի զոջաք: Որովհետեւ Ինքը ոչ միայն պատմութիւնը փոխեց, այլ նաեւ փոխեց մեր կեանքերը: Եթէ անգամ մը կը ճանչնաք անոր, անգամ կը մտնէ ձեր սիրտերէն ներս եւ փոխելու կը սկսի ձեզի, այլեւս չէք կրնար ապրիլ առանց անոր. երթալիք ուրիշ տեղ մը չունիք այլեւս: Միայն Անոր ծունկերուն առջեւ կրնաք աշակերտիլ եւ հետեւիլ: Եւ այս է, որ մենք կ'ուխտենք այս մեծ տօնին: Որովհետեւ մենք այո՛ կ'ըսենք այն մեծ պայծառակերպութեան, որ Աստուած պիտի փոխէ մեզի: Փոխել կ'ուզէ մեզի, լուսաւոր դարձնել կ'ուզէ, ժպիտ մը դնել կ'ուզէ մեր երեսին: Որքան պէտք ունի սփիւռքի եւ հայրենիքի ժողովուրդը: Ձեւականութենէն զերծ գրեթէ ժպիտ չկայ, ժպիտը շատ քիչ է: Պատճառները շատ կրնան ըլլալ, բայց հաւատացէք, որ նիւթական չեն հիմնական պատճառները, որովհետեւ մենք այդ այլակերպող, պայծառակերպող, մեր երեսը փոխող, ժպիտ, այո՛, հոն ժպիտ դնող Քրիստոսը կորսնցուցեր ենք: Եւ պէտք է Անիկա վերագտնենք, պէտք է Անոր հետ հաշտուինք, եւ պէտք է Անիկա փոխելու սկսի անհատապէս մեզի եւ ազգովին, միասնաբար, ամենքս:

Երբ որ Վարդավառ ըստի, շատերը վարդ եւ իրարու ջրել կը հասկնան: Հարկաւ թէ անիկա աւանդական տօնակատարման ձեւ մըն է: Նախաքրիստոնէական շրջաններէն մնացած է մեզի, հեթանոսական արմատներ ունի, պահուելիք բան մը չկայ. սակայն հեթանոսական չեն այլեւս այդ աւանդութիւնները, եթէ իմաստով ընենք մենք: Ինչո՞ւ. որովհետեւ մեր նախահայրերը այդ երկու մեծ խորհրդանիշներուն մէջ՝ վարդին եւ ջուրին մէջ տեսած են այլակերպութեան խորհուրդը: Վարդը փուշ մըն է, ամենէն տգեղ բոյսերէն մէկն է: Յետոյ կոկոններ կ'աճեցնէ իր վրայ, որոնք բանի մը չեն նմանիր: Բայց առաւօտ մը այնպիսի գեղեցկութեամբ կը բացուին այդ կոկոնները, որ աշխարհի ամենէն գեղեցիկ ծաղիկը կը դառնան ժպտադէմ: Այսինքն այդ անկերպար բոյսը կը փոխուի, կ'այլակերպի: Նոյնը պատահեցաւ Տէր Յիսուս Քրիստոսին: Այն է Թաբոր լեռան վարդը: Եւ Իր աշակերտներուն առջեւ այդ կոկոնը բացուեցաւ սպիտակ, լուսաւոր: Իսկ ջուրը բոլոր այլակերպութիւններուն, բոլոր փոփոխութիւններուն, կեանքի խորհրդանիշն է: Եւ Տէր Յիսուս կ'ըսէ. «Ես եմ Կեանքի Ջուրը: Եթէ մէկը Ինձի գայ, երբեք չի ծարաւնար: Եթէ մէկը հաւատայ Ինձի, իր էութեան մէջէն կենդանի ջուրերու աղբիւրներ կը բխին»:

Հետեւաբար երբ որ այսօր պիտի ջրեք իրարու, հազարաւոր տարիներ տեւող այս աւանդութիւնը պիտի կատարեք, ձեր միտքին մէջ սա՛ պահեցեք. մարդը փոփոխութեան պէտք ունի, մարդը փոխուելու կարօտ արարած մըն է, եւ անիկա միայն Աստուած կրնայ փոխել: Քրիստոսի հոգեւոր ջուրն է, Անոր խօսքերն են, որ մարդուն այդ փոփոխութիւնը կրնան տալ: Ուրեմն ձեր մտքին մէջ թող այդ ըլլայ:

Ես պիտի շնորհաւորեմ ձեր այս սուրբ տօնը: Քրիստոսի օրհնութիւնը ձեր տուններուն մէջ ըլլայ, մեր վրայ ըլլայ, մեր հայրենիքին վրայ ըլլայ եւ հոնկէ լոյս հայթայթէ մեզի, եւ հաւատքի ջուրով կանանչին վերստին մեր եկեղեցիները, մեր վանքերը, եւ հոնկէ աստուածահաճոյ պտուղներ առաջանան:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ Ձեզ, ընդ ամենեսեանդ. Ամէն :

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան



**ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ՅՈՒԼԻՍ 2019 –
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՆԵԼՈՑ**

Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոցն
առաւօտ. ժամը 10:30

**LUNDI
29 JUILLET 2019**

Office de requiem pour tous les défunts à 10:30

ՏՕՆԵԼԻ ԱՆՈՒՆՆԵՐ

ՎԱՐԴԳԷՍ, ՎԱՐԴԱՎԱՌ, ՎԱՐԴ, ՊԱՏՐԻԿ, ԱԼՎԱՐԴ,
ԶԱՐՎԱՐԴ, ԼՈՒՍՎԱՐԴ, ՆՈՒԱՐԴ, ՊԱՅՇԱՌ,
ՎԱՐԴԱՆՆՅՇ, ՎԱՐԴԻԹԵՐ, ՎԱՐԴՈՒՂԻ, ՎԱՐՎԱՌԷ

NAME DAY CELEBRATION

VARTKES, VARTAVAR, VART, PARTICK, ALVART,
ZARVART, LOUSVART, NVART, BAYDZAR,
VARTANOUSH, VARTITER, VARTOUHIE, VARVAREE

HOLIDAYS

Saturday, July 27, 2019

COMMEMORATION OF THE TABERNACLE OF OLD TESTAMENT (OR THE OLD ARK) AND THE FEAST OF THE NEW HOLY CHURCH

Tabernacle of the Old Testament is the most sacred sanctity of the Old Testament, where the board of the Ten Commandments, Aaron's ornament crosier and the golden urn full of manna were kept. Christian Church is considered to be the prototype of the New Testament - that is - the Church of Christ. So, this feast has been included in the calendar to symbolize the mystery of eternity of the Church.



Sunday, July 28, 2019

FEAST OF TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST

The Feast of the Transfiguration of Our Lord Jesus Christ is one of the five main "Tabernacle" feasts of the Armenian Apostolic Orthodox Holy Church. It commemorates the transformation or the "transfiguration" that came over Jesus while He was praying. Christ's face shone like the sun and his clothes became a radiant and gleaming white. The Apostles Peter, James and John witnessed that event which occurred on a high mountain named Tabor.



Evangelists St. Matthew, St. Mark and St. Luke testify about the transfiguration of Jesus in the Gospels (Matthew 17:1-13; Mark 9:1-12, Luke 9:28-36).

"... As they looked on, a change came over Jesus: his face was shining like the sun and his clothes were dazzling white. Then the three disciples saw Moses and Elijah talking with Jesus. So Peter spoke up

and said to Jesus, “Lord, how good it is that we are here! If you wish I will make three tents here, one for you, one for Moses and one for Elijah.” While he was talking, a shining cloud came over them, and a voice from the cloud said, “This is my own dear Son, with whom I am pleased – listen to him!” When the disciples heard the voice, they were so terrified that they threw themselves face downward on the ground. Jesus came to them and touched them. “Get up,” he said. “Don’t be afraid!” So they looked up and saw no one there but Jesus. (Matthew 17:2-8)

In the Armenian Church, the Feast of the Transfiguration of Our Lord Jesus Christ is celebrated 98 days following Easter. The Feast also is known by the common name of “Vardakas”. This day is associated with an old Armenian tradition of pouring water on one another. Some sources attribute the tradition as a remnant of an Armenian pre-Christian celebration. The Monday following the Feast is a Memorial Day.

VARTAVAR WITH WATER

The most celebration among Armenians is Vartavar, when people sprinkle water on each other remembering the story of Noah and Flood. Unfortunately, throughout the centuries this beautiful custom had been reintroduced as a pagan feast dedicated to some idols. The atheist scholars (this is what we learned in the schools and universities in Armenia for almost eight decades



during the communist regime) emphasized this idea more. However, those scholars never explained or questioned why the Armenians kept celebrating Vartavar by sprinkling water on each other and gifting roses to each other on the Feast day of Transfiguration of Jesus Christ?

It is historically proved that the Christian Church turned some of the pagan feasts into Christian celebrations and that St. Gregory the Illuminator joined the celebration of “pagan” Vartavar with the Transfiguration of our Lord not only to stop the pagan custom, but also to call to remembrance that the Armenians celebrated Vartavar long ago, starting from our forefather Noah after Flood when the Ark came to rest on top of the Mt. Ararat:

“This ancient feast that keeps the memory of the Flood has got a new Christian reinterpretation and is related to the Transfiguration of Christ in the following way. According to the Armenian Church Fathers and especially to St. Grigor Tatevatsi (1345-1409), the feast of Transfiguration is called Vartavar, because the brightness of a rose is hidden in its bud, and likewise Jesus kept hidden the light of His Divine glory in His body prior to His Transfiguration on Mount Tabor. Afterwards, He revealed and showed it in all its brightness on Mount Tabor.”

(The Armenian Church has always celebrated the Feast of Transfiguration in the summer time. Along with the other traditional churches, the Armenian Church used to celebrate this feast on August 6, however, after the fifth century Armenians started to celebrate the Transfiguration of our Lord on the 98th day (that is, the 14th Sunday) following Easter, between June 28 and August 1. Therefore, it was easy for St. Gregory to transfigure the old and pagan feast into a new and Christian celebration.

For some linguists this word has a Persian root: the word nava means new and the word sard means year, which makes sense, because the old Armenian calendar started the New Year with the month of Navasard. Therefore, this month marked the beginning of the New Year and by sprinkling water on each other on the first day of the year, pagan Armenians cleansed themselves from their old lifestyle and prepared themselves to enter and to celebrate the New Year.

This is the first day of the new era of the humanity; this is the first day of the second generation of the humanity. And Armenians called the first month of the New Year Navasard to emphasize the Biblical truth that Noah’s Ark came to rest on Mountain Ararat. Therefore, every year Armenians celebrated the New Year by sprinkling water on each other and let the doves fly to keep the story of Flood and Noah alive in their national custom and to remember the story of the second generation of humanity.

We assume that St. Gregory performed his first baptism service of the Armenian People in 301 on the day of the Feast of Transfiguration of our Lord. First, because it was summer time and the weather was just perfect for catechumens to go into the river (running waters) to be baptized by St. Gregory.

Secondly, as we know Vartavar had been celebrated in the summer time, and that was the reason that St. Gregory transfigured the pagan Vartavar into a Christian celebration by giving a new meaning to that national custom. If the Armenians sprinkled water on each other as a fun event or as a part of pagan celebration, after adopting the Christian faith, Armenians sprinkled water on each other to remember the first baptism ever performed in the Armenian Land by the Holy Apostles and by St. Gregory the Illuminator.


Therefore, the first day of the salvation of the second generation of humanity became the first day of the salvation and transfiguration of the entire nation.

In the story of Transfiguration (Matthew 17:1-9, Mark 9:2-9, Luke 9:28-36, 2 Peter 1:17-18) we read that Jesus took with Him three of His Apostles (Peter, James, and John) on top of the Mount Tabor and was transfigured in front of their eyes, showing them the beauty of His Kingdom and the Light that came out of His Body.

The water baptism is that personal transfiguration, when after washing away our sins, we are becoming transfigured, and retrieving our lost image and becoming the dwelling place and a temple for the Holy Spirit. We are putting on Jesus (Romans 13:14) and getting illuminated through His Light. We are becoming a new and transfigured person in this world for His glory. Therefore, when we sprinkle water on each other on the day of Vartavar, we remind ourselves of our own baptism and “renew” it with the Light of Mount Tabor.

It is interesting to mention that the stories of the prophets appeared to Jesus at that time; Moses and Elijah are greatly connected with the water. Moses saved his nation passing them through the Red Sea, which became the symbol of the Christian Baptism. The life and the mission of Prophet Elijah are full with the presence of water. Many miracles were performed with the water, he was the one who was praying God to send rain or stop it (1 Kings 17 and James 5:17).

As we can see, water was and is one of the essential and necessary parts of these celebrations, not only in national customs, but also in the liturgical celebrations. Unfortunately, the religious connotation and the meaning of the usage of the water during these celebrations were lost in the course of history, but we hope that through the grace of God, our people will realize that sprinkling water on each other on the day of Transfiguration is not only fun to keep us cool in the summer time, but also has a deep religious meaning to remind us that we were transfigured and became the adopted children of God through the water baptism.



ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
A L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

RENOVATION FUND RAISING CAMPAIGNE:

Church Exterior Walls Fundraising Renovation

We are very grateful to announce that besides our online donations our Church is receiving also offline donations as of the followings:

New Donators:

Mr. & Mrs. Raci Altan, Dr. & Mrs. Hrair & Manoush Derkevorkian,
Mrs. Nairi Kehyaian, Mr. Haroutyun Balian,
Association Culturelle Arménienne Nor Serount, Mr. Guiragos Tutunjian,
Mr. & Mrs. Vahan & Anoush Sekeryan, Mrs. Marguerite Garabedian,
Mrs. Inga Khatchaturova, Mrs. Ofelia Nersesian, Mr. & Mrs. Karen Sahakyan,
Maral Boghossian

Offline donations Total - \$9010 / Online donations Total: \$4415

Ladies Auxiliary - Mini-Bazaar - Proceeds Allocated for the Church

Renovation Fundraising - \$4225

Presently - Grand Total: \$17,650

We appreciate all our previous and new donators' efforts that have been put into action to make our church future truly bright & our Lord's House a prosperous place for all our prayers.

Thank you very much for your support and generosity!

FOR ONLINE DONATIONS PLEASE CLICK TO THE LINK

<https://bit.ly/2YcCyT9>

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE LUSY ESMEZYAN:

Mrs. Karine Kosnakian \$200, Yapar Brothers \$150, Mrs. Verjine & Mrs. Azaduhi Turac, Mr. & Mrs. Hrayr & Ani Kurkcuoglu, Mr. Inc. Jeweladay, Mr. & Mrs. Raffi Frengul, Mr. & Mrs. Nubar Turac \$100, Mr. & Mrs. Shahan Gazeryan, Mr. Kirkor Turac, Mrs. Anna Kosnakyan, Mr. & Mrs. Arakel & Alice Arakelian, Mrs. Madeleine Nakuz, Mrs. Beatrice Sefilyn \$50, Mr. & Mrs. Zaven Gudsuz, Mr. & Mrs. Hubert & Anna Mahcupyan \$40, Mr. Garbis Ferah, Mr. Bedri Aksoy \$30, Mr. & Mrs. Armenak Bsmajian, Mr. Kerdam Goskun, Mrs. Natalie Met \$25, Mr. Arman Ozumit, Mrs. Azad Sedefci \$20

THE LATE VERONICA KRIKORIAN:
Mr. & Mrs. Yeghis Atamian \$20

**HOKEHANKISD (REQUIEM SERVICES)
IN MEMORY OF:
THE LATE IMASDUHI NIGOGOSSIAN:**
Ladies Auxiliary:
Mr. Vrej Nigogossian \$1000

THE LATE SIMONIAN FAMILY:
Mr. & Mrs. Krikor & Sylvia Demirjian \$50

THE LATE SIRANOUSHE & NERSES AROYAN:
Mis Shoushan Aroyan \$100

THE LATE SEPETJIAN & BALIAN FAMILIES
Mrs. Vergine Sepetjian \$50

THE LATE MARGUERITE BALI TERNAMIAN
Mrs. Sonia Ternamian \$100

THE LATE JOSEPH EGOYAN
Mr. & Mrs. Jerry Devletian \$100

MONTHLY DONATIONS FROM JULY 9 – JULY 23, 2019

Mr. Nubar Turac, Mrs. Karine Kosnakian \$200, Mr. Jewellers Inc. Lega \$150,
Mrs. Azaduhi Turac, Mr. Hrayr Kurkcuoglu, Mr. Inc. Jeweladay, Mr. Raffi
Frengul \$100, Mr. Vartkes Gazeryan, Mr. Kirkor Turac, Mrs. Anna
Kosnakyian, Mr. Arakel Arakelian \$50, Mr. Rojer Gudsuz, Mr. Hubert
Mahcupyan \$40, Mr. Garbis Ferah, Mr. Bedri Aksoy \$30, Mrs. Annie
Karadjian, Mr. Kerdam Goskun, Mrs. Natalie Met \$25, Mr. Arman Ozumit,
Mrs. Azad Sedefci \$20





ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի հաւատացեալներուն ուշադրութեան կը յանձնենք թէ յետայսու Յուդարկաւորութիւններու ընթացքին հանգուցեալի հարագատներէն կը խնդրուի նկատի ունենալ, թէ արարողութեան ընթացքին որեւէ սրտի խօսք կամ դամբանական կարդացուելէն առաջ, հարկ է նախօրօք կապ հաստատել Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066, այլապէս ենթական իրաւունք չունենար որեւէ խօսք առնելու եկեղեցոյ մէջ, առանց Հոգեւոր Հովիւի գիտակցութեան եւ արտօնութեան:

Շնորհակալութիւն ձեր ողջախոհութեան համար:
Եկեղեցոյ գրասենեակ

ATTENTION

we would like to ask to our beloved faithful to take note that in terms of funeral services the family members before making any heartfelt speech or eulogy, it is necessary to contact the Church Office at (514) 279-3066 or otherwise will not be possible to make any speech in the church without the consciousness and permission of the Parish Priest.

Thank you for your generosity.
Church Office:

ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Մարդու մարմինը վառող մոմի մը նման է: Մոմը պետք է այրի եւ մահանայ: Բայց հոգին անմահ է, հետեւաբար մեր խնամքը պետք է աւելի շատ հոգիին, քան մարմնին համար ըլլայ:

Ս. Սէրաֆիմ Սարովլցի

«Խաչը նեղ դարպասն է, որուն միջոցով Տէրը մեզ կանչեց ներս մտնել»

Շենուտա Գ հայրապետ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

Յուլիս– Juillet

29, Երկուշաբթի – Բ օր Վարդավառի,
Յիշատակ Մեռելոց:

Lundi 29 – 2ème jour de la Transfigurationan.

30, Երեքշաբթի – Գ օր Վարդավառի:

Mardi 30 – 3ème jour de la Transfigurationan.

31, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 31– Jeûne.

Օգոստոս– Août

1, Հինգշաբթի – Տօն Սրբոյն Եսայեայ մարգարէին:

Jeudi 1– Fête du la Saint prophète Esaie.

2, Ուրբաթ – Պահք:

Vendredi 2 – Jeûne.

3, Շաբաթ– Սրբոցն Թադէոսի առաքելոյն մերոյ
եւ Սանդիստոյ կուսին:

Samedi 3 – Fête de notre Saint apôtre Thaddée

Et de la vierge Santoukhd.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Պարգեւատու բարիքներու,
եւ խաղաղութեան աղբիւր, Տէ՛ր, մեր Աստուած.
սատայական բոլոր խռովութիւններէն
խաղաղացո՛ւր մեր միտքն ու խորհուրդները,
թէ՛ այս գիշեր եւ թէ՛ ամէն ժամանակ:
Որպէսզի անցաւոր այս կեանքին մէջ քեզմով առաջնորդուինք, ու
հասնինք յաւիտենական երկինքի թագաւորութեանդ,
որ աշխարհի սկիզբէն իսկ
պատրաստեցիր քու սուրբերուդ համար.
Եւ անոնց հետ միասին շնորհակալութիւն յայտնելով
փառաւորենք քեզ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի.
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

PRIÈRE POUR TOUS

Dispensateur de bienfaits, et source de paix,
Seigneur notre Dieu,
apaise nos esprits et nos pensées des troubles de Satan,
pour cette nuit et à tout instant; afin que,
sous ta conduite dans ce monde temporel,
nous parvenions à ton royaume céleste éternel que tu as préparé
depuis le début du monde pour tes saints;
et en te rendant grâces avec eux,
nous te glorifierons avec le Père, le Fils et le Saint Esprit,
maintenant et pour l'éternité de l'éternité.
Amen.

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ
Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովին ու Ծխական Խորհուրդը

ՇԻՆԿ ՃԻԱՆ ԼԻՈՒԻ
ԵՒ

ՆԱԹԱԼԻ ՆԱԶԵԼԻ ԵԱՂՃԵԱՆԻ
Պսակադրութեան ուրախ առիթով
Իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն
պսակադրեալ զոյգի
Ծնողներուն եւ հարազատներուն,
մաղթելով որ Աստուածային Օրհնութեան
արժանանան իրենց կեանքի ամբողջ տեւողութեան:

CONGRATUALTIONS
ON THE WEDDING CEREMONY

The Pastor & Parish Council
Of the St-Gregory the Illuminator
Armenian Cathedral

On the Wedding Ceremony
Of

XING JIAN LIU

&

NATHALIE NAZELI YAGHJIAN

Extend their heartfelt congratulations
to their parents and family,
wishing them to receive
God blessing throughout their life.

ՄՈՆՔՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐՂԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԼԱՎԱԼԻ Ս. ԽԱԶ ԿԱՅԱՍԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
HOLY CROSS ARMENIAN APOSTOLIC CHURCH OF LAVAL
ՕՏՁԱՌՈՒՄՅԻ Ս. ՄԵՍՐՈՊ ԿԱՅԱՍԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ST. MESROB ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OTTAWA

**ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՄԱՆԱԿԵՐՊՈՒԹԱՆ ՏՕԼ (ՎԱՐՂԱՎԱՌ)
TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST (VARTAVAR)**

ՈՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՌԻԿՕ

PILGRIMAGE TO RIGAUD

43 RUE DE LOURDES, RIGAUD, QC

ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒԼԻՍ /SUNDAY, JULY 28, 2019



Հանդիսաւոր Ս.Է. Անմահ Պատարագ / Holy Mass

կէսօրին ժամը / at - 12:30-ին noon

Պատարագիչ և քարոզիչ / Celebrant

ԳԵՐԸ. Տ. ԱՐԳՎՐ ԵՂՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Առաջնորդ Գաւառահայոց Թեմի

HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN / Primate

Ուշադրութիւն. Ճաշի մատուցում միմիայն Ս. Պատարագէն ետք

Attention: The Lunch will be served only after the Holy Mass

Վարդավառի Տօսի Աւանդական Ջրախաղ
(փոքրերուն համար փոխնորդ հագուստներ ունենալ)

Festive Traditional Water Play

(Don't forget to have extra cloths for kids)

ՕԹՕՊԻՄԻ ՄԵՎՆՈՒՄ

Մոնթրէալ - Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center
(Rue Salaberry) առաւօտեան ժամը 10:00-ին

Լաւալ - Ս. Խաչ Հայոց Առաք. Եկեղեցի (Centre Armenie 1025 Boul. Elizabeth,
Laval, QC) առաւօտեան ժամը 10:30-ին

Սակ - Օթթօպիւս և Ծաշ - Մեծերու - \$35 / Փոքրերու (5 - 12 տարեկան) \$25

Սակ - Անձնական միշոց - Ծաշ - Մեծերու \$25 / Փոքրերու (5 - 12 տարեկան) \$15
(0-5 տարեկան փոքրերը ձրի)

BUS TRANSPORTATION

Montreal - Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center
(Rue Salaberry) at 10:00 am

Laval - Holy Cross Armenian Church (Centre Armenie 1025 Boul. Elizabeth, Laval,
QC) at 10:30 am

Fee - Bus & Lunch - Adult - \$35 / Children - \$25

Fee - Personal Transportation - Lunch - Adults \$25 / Children - \$15

(Free - Children - 0-5 age)

Տոմսերու ապահովման համար հեռաձայնել նշեալ թիւերն մէկուն մինչեւ 27 Յուլիս

For reservation & tickets please call one of the following phones until July 27th

- Մոնթրէալ / Montreal - Մարալ / Maral (514) 279-3066
- Լաւալ / Laval - Երան / Yeran (514) 609-8384
- Օթթաւա / Ottawa - Յակոբ / Hagob (613) 762-7341



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ**

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

**ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԲ. ԳԱՏԱՐԱԳ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

առաւօտեան ժամը 10:30-ին

Գառարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՀՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ
Հոգևոր Հովի**

Յաւարտ Ա. Գառարագի

«Խորովածի Տպասարկութիւն»

նախաձեռնութեամբ՝

Միակն խորհուրդի

Մասնակցութեամբ՝

Գոլասնայ Միութեան հաստատարիմ հայորդեաց

«Անուշեղէնի «Կանաչ» կազմակերպութեամբ՝

Տիկնանց Յանձնախումբին

Եկեղեցայ պարտեզին մէջ:

Մտարի Կուր՝ \$20



ASSUMPTION OF HOLY VIRGIN

SUNDAY, AUGUST 18, 2019

**DIVINE LITURGY
AND BLESSING OF GRAPES**

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

At the end of the Blessing of the Grape,
the service of B.B.Q. organized by the Parish Council
with participation of Bolsahay Cultural Center

Pastry sales,
by assistant ladies from the church.



Entry \$ 20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / Email saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



KARAOKE ԸՆԴՈՒՔԷ

Կազմակերպութեամբ՝

«ԿՈՄԻՏԱՍ»

Դպրաց Դաս / Երգչախումբի

Ուրբաթ, 23 Օգոստոս 2019

Երեկոյեան ժամը 6:00-ին

«Մարի Մանուկեան» սրահ

Friday, August 23, 2019 at 6:00 pm

“Marie Manoogian” Hall

- Երգեցողութիւն/Singing
- Կերուխում /
Burger/Potato/Salad/Soft Drinks

Քրակիրուած են բոլոր
Երիտասարդները
Don't Miss

Տեղերու ապահովման հեռաձայնել Եկեղեցւոյ
Գրասենեակ - For reservation please call to the Church
office at: (514)279-3066

\$20 Entry

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008 / stgregorychurch@gmail.com





ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Սիրով կը յայտնենք, թե Շաբաթ 27 Յուլիս 2019-ի երեկոյեան ժամը՝ 5-ին, Երեկոյեան (Կիրակամտից) Ժամերգութիւն պիտի կատարուի Մոնթրէալի Սր. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացելները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՍԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

**Տեղի կ'ունենայ ամեն Հինգշաբթի,
երեկոյեան՝ ժամը 7:00-ին եկեղեցւոյ մէջ**

**Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan**

**Il aura lieu chaque jeudi
à 19h00 à l'église**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու
Տ. Դաւիթ Զինյ. Սարգարեանի՝
Ներկայացուցած
Աստուածաշնչական նիւթերուն**

**Nous invitons nos chers fidèles à participer à ces
séances d'interprétations bibliques.**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

Une collation de café et de thé est servie

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին երկայնութիւնը

Nous comptons sur votre participation massive



**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյ պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,
Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց շուրջառներ եւ հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցոյ տօնաձառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մուրք
- Ջրօրինէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր՝ կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտտույ տուած գտնես»:

«Հոգեւոր հայելի»

Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



ՌԻՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

PILGRIMAGE TO PÈLERINAGE EN

ARMENIA



ARMÉNIE

02.10.2019

15.10.2019




Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցու Գանատահայոց Թեմը
Օրհնութեամբ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերջ Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի՝
կր կազմակերպէ 14 օրեայ Ռէտազնացութիւն
դէպի Մայր Հայաստան:
Մանրամանութիւններու համար հաճեցէք
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:




The Armenian Diocese of Canada,
with blessings of
His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate
is organizing a 14-day pilgrimage to Armenia.
For details, please contact the Diocese.



Le Diocèse arménien du Canada
organise un pèlerinage de 14 jours en Arménie,
avec bénédictions du
Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.
Pour plus de détails, veuillez contacter le
Diocèse.



USD \$1,400 PER PERSON IN DOUBLE ROOM
SINGLE SUPPLEMENT \$400



Price includes: Hotel accommodation with Breakfast,
14 Lunches, 1 Dinner, Entrance fees to the sites,
Transportation, Professional Guide
Not included: Visa fee, Airfare, Insurance.



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada»
on Facebook to receive and
share news about the Diocese.



WATCH

a documentary about the Pilgrimage. Find
the «Armenian Diocese of
Canada» Channel on YouTube.

